Քաղաքականության համառոտագիր
ՀԸԳՀ (CEPA) շրջանակներում ՀՀ համաչափ զարգացմանն առնչվող՝ ՀՀ կառավարության պարտավորությունների մոնիտորինգի զեկույցի հիման վրա մշակված

Այս համառոտագիրը մշակվել է մի մոնիտորինգի զեկույցի հիման վրա, որի նպատակը Եվրոպական Միության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ կնքված Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի (Համաձայնագիր, CEPA), դրա հավելվածների, ճանապարհային քարտեզի եւ գործողությունների ծրագրի այն հանձնառությունների եւ գործողությունների եւ դրանց կատարման քննությունն է, որոնցով նախատեսվում է ապահովել երկրի համաչափ զարգացմանն ուղղված հատուկ գործողություններ:

Որքանո՞վ է ՀԸԳՀ գործողությունների ծրագիրը արդյունավետ իրականացվել 2021-2024 թթ. ընթացքում, արդյո՞ք կատարված աշխատանքները համապատասխանում են ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման ժամանակացույցին եւ չափանիշերին: Եթե ոչ, ապա ի՞նչ ծավալով չի համապատասխանում եւ ըստ այդմ՝ ինչ պետք է արվի եւ ինչ է առաջարկվում ՀՀ իշխանություններին՝ պարտավորությունների կատարումն ապահովելու համար: Ահա այդ հարցերն են ընկած եղել մոնիտորինգի նախաձեռնության հիմքում: Այս հետազոտությունը, բացի ՀՀ իշխանություններին մատուցվող բացահայտումներն ու առաջարկությունները, կարող են օգտակար լինել ՀՀ-ԵՄ ինտեգրման եւ Համաձայնագրի պարտավորությունների կատարման խնդիրներով զբաղվող եւ մտահոգ հասարակական կազմակերպությունների, գիտական եւ հետազոտական կազմակերպությունների, հասարակական եւ քաղաքական գործիչների, ՁԼՄ-ների համար:

Այս հետազոտության ժամանակահատվածը համընկել է մի խումբ կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ ՀՀ ԵՄ անդամակցության համար օրենքի ընդունման նպատակով իրականացված ստորագրահավաքի եւ դրա հիման վրա ԱԺ-ում օրենքի ընդունման իրադարձությունների հետ: Բացի այդ, Համաձայնագրի նպատակը ՀՀ-ԵՄ համագործակցության խորացումն է, ինչը ՀՀ զարգացման, ինքնիշխանության եւ ժողովրդավարացման լուրջ խթան է, եթե, իհարկե, դրանով ստանձնված պարտավորությունները ՀՀ իշխանությունները իրականացնում են հետեւողականորեն եւ բարեխղճորեն: Այդ տեսանկյունից էր կարեւոր եւ արժեքավոր՝ պարզել, թե ինչ որակով են իրականացվում Համաձայնագրային պարտավորությունները,

մասնավորաբար, տարածաշրջանային համաչափ զարգացման խնդիրը կարգավորելու համար:

Հայաստանի անհամաչափ զարգացման խնդիրը առաջացել է տասնամյակների ընթացքում, պետության զավթման մակարդակի կոռուպցիայի պատճառով, նաեւ այն պատճառով, որ իշխանությունները այդ խնդիրը որպես երկրի կենսունակության մարտահրավեր չեն դիտարկել, անտեսել են ժողովրդագրական ճգնաժամը, տարածքներում ենթակառուցվածքների համար արվող ներդրումների կարեւորությունը:

Մոնիտորինգի գործիքակազմում էական են եղել փաստաթղթերի՝ բաց աղբյուրներից խորքային ուսումնասիրությունները, պետական իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված Համաձայնագրին, հանձնառություններին ու գործողություններին առնչվող պաշտոնական տեղեկությունները, համեմատությունները, վերլուծությունները: Կատարված աշխատանքի հիման վրա կազմվել է մոնիտորինգի զեկույց, որում տեղ են գտել բացահայտված խնդիրների կարգավորման առաջարկություններ, այն ակնկալիքով, որ ՀՀ իշխանությունները պատշաճ ուշադրություն կդարձնեն այդ առաջարկություններին, կվերանայեն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները կատարելու ճանապարհային քարտեզը, գործողությունների ցանկը եւ կատարողականությունն ապահովող պայմանները՝ համապատասխան ցուցիչներով:

Ի՞նչ է բացահայտել մոնիտորինգը եւ ի՞նչ ուղղությամբ են պարտավոր աշխատել ՀՀ իշխանությունները Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները կատարելու համար: Իրականացված մոնիտորինգի շնորհիվ պարզվել է, որ չնայած 2021-2024 թթ. երկրի համաչափ զարգացման ուղղությամբ ներդրված որոշ ջանքերին, առայժմ չկան վիճակագրորեն փաստարկված տեղեկություններ կամ ողջամիտ հիմքեր հայտարարելու համար, որ հատկապես Համաձայնագրով ստանձնած եւ իրականացված պարտավորությունների կատարումն ապահովել է որակական տեղաշարժ այդ ուղղությամբ: Բացի այդ Համաձայնագրի իրականացման ճանապարհային քարտեզի գործողությունների կատարողականների ցուցիչները տարածքային համաչափ զարգացման մասով հիմնականում ընդհանրական են եւ անհնար է սահմանված թիրախների հաղթահարման քանակական եւ ծավալային պատկեր պարզել:

Մասնավորաբար. ՀՀ հանձնառությունները սահմանված են ՀԸԳՀ հավելվածներում (Առաջին-132, 133, 134, երկրորդ-79, 80, 81): Մոնիտորինգի արդյունքում, ուսումնասիրելով ՀՀ օրենսդրությունը, ՀԸԳ համաձայնագիրը, հանձնառությունները, կատարողական ցուցանիշները, եզրակացություններ են արվել այն մասին, որ Հայաստանի համաչափ զարգացման հարցում Համաձայնագրում ստանձնված պարտավորությունների պատշաճ չեն կատարված: Դրա պատճառներից մեկը այդ հանձնառություններն ապահովելու

գործողությունների անհամարժեք կամ թերի ձեւակերպվածությունն է, կամ էլ դրանց կատարման հարցում անվաբարար ջանքերը եւ հետեւողականության պակասը:

Ի՞նչ է հարկավոր անել: ՀՀ կառավարությանն ու Ազգային ժողովին ուղղված առաջարկություններից մեկը վերաբերվում է համաձայնագրով ստանձնված հանձնառությունների կատարման համար գործողությունների վերանայումը, դրանց համարժեք սահմանումը, դրանց կատարողականությունն ապահովելու համար, ժամկետային, ռեսուրսային եւ ծավալային ցուցիչներով ապահովումը: Առաջարկվում է նաեւ վեց ամսում իրականացնել օրենսդրական եւ ենթաօրենսդրական ակտերի ընդունում, որոնցով կապահովվեն ՀՀ վարչապետի 2023թ. նոյեմբերի 7-ի № 1111-Ա որոշմամբ հաստատված ՀՀ-ում լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգը, գործարկումը:

Առաջարկվում է նաեւ արմատապես վերանայել համայնքների ֆինանսավորման առկա համակարգերը, այն հաշվով, որ համայնքների, բնակավայրերի, տարածքների զարգացման, ենթակառուցվածքային ապահովման եւ ծառայությունների հասանելիության համար համայնքները ունենան անհրաժեշտ եւ բավարար միջոցներ: Այս նպատակին հասնելու համար առաջարկվում է նաեւ պետական լիազորությունների արդյունավետ վերաբաշխում իրականացնել հօգուտ տեղական ինքնակառավարման մարմինների:

Համաձայնագրի ոլորտային մոնիտորինգը իրականացրել, զեկույցը եւ առաջարկությունները մշակել է Ժուռնալիստների Ասպարեզ ակումբի խորհրդի նախագահ, տեղական ինքնակառավարման հարցերով մասնագետ Լեւոն Բարսեղյանը:

Կոնտակտային տվյալներ | +37491821363 | levon@asparez.am | Հայաստան, Գյումրի, Մադոյան փ., 130/1:

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը՝ Լևոն Բարսեղյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: